Հեպատիտ A

1. Ի՞նչ է հեպատիտ A-ն:

Հեպատիտ A-ն շատ վարակիչ (տարածվում է մարդուց մարդ) լյարդի հիվանդություն է, որի պատճառ է հանդիսանում հեպատիտ A վարակը (մանրէ): Թեթև դեպքերը կարող են տևել մի քանի շաբաթ, մինչդեռ ծանր դեպքերը կարող են տևել մի քանի ամիս:

2. Ինչպե՞ս է տարածվում հեպատիտ A-ն:

Հեպատիտ A-ն տարածվում է, երբ ձեր բերանն եք դնում մի բան (առարկա, սնունդ կամ խմիչք), որը կպել է վարակված անձի կղանքին (աղկո): Հեպատիտ A-ն կարող է տարածվել հետևյալ կերպ՝

- Մոռանալ լվանալ ձեռքերը զուգարանից օգտվելուց կամ տակդիրներ փոխելուց հետո
- Սեռական հարաբերություններ ունենալ վարակված զուգընկերոջ/զուգընկերների հետ
- Վարակ պարունակող սնունդ կամ խմիչք օգտագործելը

3. Որո՞նք են հեպատիտ A-ի վտանգները:

Անտուն մարդիկ ունեն հեպատիտ A ձեռք բերելու ամենաբարձր վտանգը: Որեւէ անձ կարող է վարակուել հեպատիտ A-ից, սակայն ձեր վտանգն ավելի բարձր է, եթե դուք՝

- Ճանապարհորդում եք կամ ապրում մի երկրում, որտեղ տարածված է հեպատիտ A-ն
- Բնակվում եք հեպատիտ A ունեցող մեկի հետ
- Թմրանյութեր եք օգտագործում
- Տղամարդ եք, որը սեռական հարաբերություններ ունի տղամարդկանց հետ
- Սեռական հարաբերություններ ունեք հեպատիտ A ունեցող մեկի հետ
- Անտուն եք

4. Որո՞նք են հեպատիտ A-ի ախտանիշները:

Ոչ բոլորն են ախտանիշներ դրսևորում: Եթե ախտանիշներ են հայտնվում, ապա դրանք տվորաբար առաջանում են վարակվելուց 2-ից 6 շաբաթ հետո: Ախտանիշները կարող են ներառել՝

Ո՞վ պետք է պատվաստվի:

- Երեխաները 1 տարեկանում
- Հեպատիտ A-ի տարածում ունեցող երկրներ ճանապարհորդողները
- Հեպատիտ A-ի տարածում ունեցող երկրներից որդեգրածների ընտանիքները և խնամակալները
- Տղամարդիկ, որոնք սեռական հարաբերություններ ունեն տղամարդկանց հետ
- Թմրանյութեր օգտագործողները
- Լյարդի քրոնիկ հիվանդություն կամ հեպատիտ B կամ C ունեցող մարդիկ
- Մակարդման գործոնի խանգարումներ ունեցող մարդիկ
- Անտուն մարդիկ

CDCP-ACDC-0099-04 (09/19/17)

- Տենդ
- Հոգնածության զգացում
- Ախորժակի կորուստ
- Սրտխառնոց
- Փսխում
- Ստամոքսի ցավեր
- Մուգ մեզ (չիշիկ)
- Գորշ կղանք
- Հոդացավ
- Մաշկի և աչքերի դեղնություն

5. Ինչպե՞ս է բուժվում հեպատիտ A-ն:

Բուժումը ներառում է հանգիստ, լավ սնուցում, հեղուկներ և բժշկական վերահսկում: Որոշ մարդիկ, հնարավոր է, հիւանդանոցի կարիք ունենան: Հեպատիտ A-ով հիվանդացող մարդկանց մեծամասնությունն ամբողջովին ապաքինվում է և չի ունենում լյարդի երկարատև վնասվածք: Եթե հեպատիտ A-ի ախտանիշներ ունեք, շատ կարևոր է բժշկի այցելել:

6. Ինչպե՞ս է կարելի կանխարգելել հեպատիտ A-ն:

Հեպատիտ A-ն կանխարգել լավագույն միջոցը պատվաստվելն է: Պատվաստումն ապահով է և արդյունավետ: Այցելեք ձեր բժշկի գրասենյակ կամ զանգահարեք 2-1-1՝ տեղական կլինիկա կամ բժիշկ գտնելու համար: Դուք կարող եք նաև կանխել հեպատիտ A-ի տարածումը՝ օճառով և ջերմ ջրով լվանալով ձեռքերը՝

- Ուտելուց կամ կերակուր պատրաստելուց առաջ
- Զուգարանից օգտվելուց կամ տակդիրներ փոխելուց հետո

Լրացուցիչ տեղեկությունների համար.

Լոս Անջելես վարչաշրջան, Հանրային առողջության բաժանմունք (Los Angeles County, Department of Public Health)
http://www.publichealth.lacounty.gov/acd/Diseases/HepA.htm

Կալիֆորնիայի Հանրային առողջության բաժանմունք (California Department of Public Health)
https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/OVHP.aspx

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (Centers for Disease Control, CDC)
https://www.cdc.gov/hepatitis/hav/index.htm